ԳԱԳԻԿ Բ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՊԻԶՈՒ ՔԱՂԱՔԸ

Մ. Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

Կապադովկիայի բյուզանդական Պիզու քաղաքի անունը սերտորեն կապված է հայ Բագրատունիների թագավորության տիրույթները և Անին կորցրած Գագիկ II-ի իշխանության վերջին 34 տարիների (1045—1079 թթ.) ընթացքում տեղի ունեցած դեպքերի հետ։

Պատմիչները աղոտ տեղեկություններ են տալիս Պիզուի մասին։ Նրանցից ոչ մեկը չի հաղորդել տեղագրական որևէ տվյալ։ XIX—XX դդ. պատմաբաններ Էդ. Դյուլորիեն[1], Հ. Մանանդյանը[2], Ա. Ալպոյաճյանը[3], Մ. Օրմանյանը, Տրդատ եպս. Պալյանը և ուրիշներ ապարդյուն փորձեր են կատարել գտնելու Պիզուի տեղը։ Հավանության արժանի չէ գոյություն ունեցող այն կարծիքը, թե Փոքր Հայքի Եվդոկիա (այժմ Թոքատ) քաղաքի մոտակա Պիզերի (Պիզէռի, Պիձեռի, Պիզարէ, Պիծառու) գյուղը և նրա Ս. Խաչ վանքը Գագիկ II-ի՝ որպես ավատ ստացած Պիզուն և նրա Ս. Խաչ վանքն են։ XI դարում Փոքր Հայքում Բյուզանդիայի կայսրից որպես ավատ Սենեքերիմ Արծրունու, Դավիթ Արծրունու, Գագիկ Աբասյանի և Գագիկ Բագրատունու ստացած տիրույթների դիրքի ուսումնասիրությունից պարզվել է, որ Գագիկ II-ը ոչ մի ժամանակ Թոքատի շրջակայքում հողեր չի ունեցել։

Տրդատ Պալյանը կարծիք է հայտնել, թե Կեսարիայից արևելք գտնվող Էքրեկ (Ագարակ) բնակավայրը Պիզուն է, քանի որ Էքրեկի շուրջ գոյություն են ունեցել 60—70 հայաբնակ գյուղեր, իսկ գավառը կոչվել է Պոզուխ կամ Պոզուք։ Դրանից էլ ենթադրել է, որ Պոզուխը՝ Պիզուի աղավաղված ձևն է։ Պոզուխը ծագում է ոչ թե Պիզու, այլ Պոզ-Օք ձևից, որը հին թուրքական մի ցեղախմբի անունն էր։ Այդ տեղանունը գործածվել է Կապադովկիայում թուրքերի հաստատվելուց հետո։ Էքրեկից մի քանի կիլոմետր հեռու գտնվում է Մելիքգազի գյուղը, որը միջնադարյան Ծամնդավն է։ Ուստի անտեղի է Պիզուն փնտրել Էքրեկում՝ Ծամնդավի մոտերքում, Պոզուխի գավառում[4]։

Պիզուի մասին ամենավաղ տեղեկությունը գտնում ենք Կ. Պոլսի «Վալթիայի Ազգային մատենադարանի» ձեռագրերից՝ «Պատմութիւն Եփեսոսի ժողովոյն» աշխատությունում։ «Սահմանք ժողովոյն» վերնագրի տակ գրր-

---

[1] E. Dulaurier. Recherches sur la chronologie Arménienne. t. I, Paris, 1859, էջ 285։

[2] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 27։

[3] Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո, հատ. Ա, Գահիրե, 1937, էջ 428։ Նույնի՝ Պատմություն Եվդոկիո հայոց, Գահիրե, 1952, էջ 500։

[4] Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո, Ա, էջ 428։ Բարգեն Ա կաթողիկոս, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, Անթիլիաս, 1939, էջ 630։

ված է հետևյալը. «Խնդրոյ գիր, զոր Եպրես վերատեսուչն Բիզայու և Արկադիուպոլսոյ, և Կիւրեղ վերատեսուչն Կելոյ մատուցին սուրբ ժողովոյն»[5]։

Նույն պատմության մի ուրիշ ձեռագիր ընդօրինակության մեջ տեղանունները գրված են նաև «Բիւզայու, Կէլոյ և Կիւրղոս»[6] ձևով։

Ինչպես երևում է, Եփեսոսի եկեղեցական ժողովի (431 թ.) մասնակիցներից մեկը եղել է Պիզուն և Արկադիուպոլիսը ընդգրկող եկեղեցական թեմի առաջնորդը։ Պիզուի վերակառուցման մասին հետևյալն է գրել Ասողիկը. «Լևոն[7]. սա շինեաց զԲիւզու (Բիզու) և զԱրկադուպոլիս և զԿամառախ՝ ի մկն (816) թուականին[8]»։ Կիրակոս Գանձակեցին ևս ունի նույն բովանդակությամբ մի նշում[9]։

Վերոհիշյալ բոլոր բնակավայրերը գտնվում էին Կեսարիայի շրջակայքում, Արգեոս (այժմ՝ Էրճիասդաղ, 3916 մ) լեռան մոտ։

Պիզուի անունը հիշվում է նաև VIII դարում Բյուզանդական կայսրությունում ծայր առած պատկերապաշտության և ներքին խռովությունների կապակցությամբ։ Կոստանդին V Կոպրոնիմոս (741—775 թթ.) կայսեր անեղ և օպսիկիոն թեմի ստրատեգ հայազգի Արտավազդը, հայերի և համախոհների օգնությամբ 16 ամիս տիրել էր Կոստանդնուպոլսին ու հռչակվել կայսր։ Սակայն հաջող մարտերից հետո Կոստանդին V-ը մտնում է մայրաքաղաք և փախուստի մատնում Արտավազդին։ 743 թ. Արտավազդ կայսրը և նրա օգնական Վասակ պատրիկը քաշվում են հայաշատ Պիզու։ Վերջնական հաղթանակից հետո Կոստանդին V-ը սպանում է նրանց[10]։

Կոստանդին IX Մոնոմախ կայսեր կողմից Պիզուն և Կալոն Պաղատը Καλὸν Πηγάδι) Գագիկ II-ին տալուց (1045 թ.) 230 տարի առաջ քաղաքն արդեն մի անգամ վերակառուցված բնակավայր էր։

Պիզուի դիրքը որոշելուն նպաստող երկու տեղեկություն կա, որոնցից մեկը Գագիկ II-ի՝ Կենդրոսկավի բերդում սպանվելու դեպքի քննարկման ընձեռած տվյալներն են։ Երկրորդ տեղեկությունը տալիս է սելջուկյան արքունի քարտուղար Իբնի Բիբին՝ 1254 թ. Կոնիայի սելջուկյան գահի շուրջ սուլթան Իզզալդին Քեյքյավուս II-ի և սուլթան Ռյուկնալդին Կլըջ-Արսլան IV-ի միջև տեղի ունեցած գահակալական երկպառակությունների մասին գրած հատվածում։ Այդ կապակցությամբ նա նկարագրել է սուլթան Ռյուկնալդին IV-ի փախուստը Կոնիայի արքունի պալատից Դեվելու։ Իբնի Բիբին իր աշխատությունում նշել է սուլթան Ռյուկնալդին IV-ի երթուղին[11]։ Սուլթանը նախ գնացել է Կոնիայի և Կեսարիայի միջև ընկած Արքունի ճանա-

---

5 Բարձեն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ Ձեռագրաց Ղալաթիո Ազգային Մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961, էջ 229։

6 Նույն տեղում, էջ 92։

7 Լևոն V Հայազգի (813—820 թթ.), Բյուզանդիայի կայսր։

8 «Մատենագրութիւն Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 143։

9 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 76։

10 Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 161։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, Երևան, 1962, էջ 46։ «История Византии», т. 2, М., 1967, էջ 56։

11 „Ibni Bibinin farsçadan muhtasar Selçuknamesinden", Ankara, 1941, çev. M. N Gencosman, էջ 250—252։

պարհով (Ուլու-յոլ), որը անցնում էր Սուլթանհանը, Ակսարայ, Հոջամեսուտխանը (այժմ՝ Աղզըկարախան), Օրեսունխանը, Ալայխանը, Աճըգյոլ, Մոսքարա (այժմ՝ Նեվշեհիր), Կյուպ (այժմ՝ Ürgüp բդն. Ἀγ. Πρόκοπος) բնակավայրերով։ Կյուպը անցնելուց հետո սուլթան Ռյուկնալդինը թողել է Արքունի ճանապարհը և թեքվել դեպի հարավ, անցել է Բիզ (Պիզու) բնակավայրով և հասել Դեվելու (Խավատաներ, այժմ՝ Դեվելի գյուղակ)։ Սուլթանը մի գիշերվա ընթացքում Կոնիայից հասել էր նորակառույց Հոջամեսուտխան։ Ցերեկը կողմնակի աչքերից թաքնվելու և հանգստանալու համար իջևանել էր այդ կարավանատանը։ Հոջամեսուտխանը կառուցվել էր 1241 թ.։ Դա հոյակապ մի շինություն էր։ Այսօր դեռ գոյություն ունի նրա անխնամ մնացած շենքերի համալիրը։ Արքունի ճանապարհի վրա գտնվող Օրեսունխանը կառուցված էր 1236 թ., իսկ Ալայխանը՝ 1200 թ.։ Սուլթան Ռյուկնալդինը երկրորդ գիշերվա ընթացքում կտրել-անցել էր Հոջամեսուտխանից Դեվելու ընկած ճանապարհի երկրորդ հատվածը։ Գոյություն ուներ Ակսարայից Դեվելու տանող երկրորդ մի ճանապարհ, որն անցնում էր Նազիանզով և Մալակոպեայով, սակայն դա ձեռնտու չէր սուլթանի համար, քանի որ այդ ճանապարհի վրա գտնվող հանգրվանները օժտված չէին ճամփորդին բավարարող համապատասխան ծառայություններով։ Ըստ երևույթին XIII դարում Պիզուում եղել է ճամփորդներին ծառայություններ մատուցող հիմնարկ՝ կարավանատուն, ձիեր փոխելու կայան, ճաշարան, շուկա, բաղնիք և այլ կառույցներ։ Եթե նկատի ունենանք, որ Բյուզանդիայի Լևոն V կայսեր վերակառուցած Պիզուն շենացել էր համապատասխան շինություններով, իսկ Գագիկ II Բագրատունին կառուցել էր Ս. Խաչ վանքը և ուներ իր դիրքին համապատասխան ապարանք, ապա կարելի է պատկերացնել, որ միջնադարյան Պիզուն ունեցել է բարվոք վիճակով կապադովկյան փոքր մի քաղաքի տեսք։ Այն ունեցել է նաև տրանզիտային նշանակություն։

Իբնի Բիբիի «Սելջուկնամեում» Պիզուի անունը աղավաղված ձևով է տրված արաբերենի տառադարձության պատճառով։ Բացի այդ, սելջուկ-թուրքերը, որոնք տիրել էին այդ կողմերին, 165 տարիների ընթացքում տեղանունները փոխել և իմաստավորել էին ըստ իրենց լեզվի պահանջների։ Հետագայում Պիզուի անունը կրկին փոխվել է և այժմ կոչվում է Բաշքյոյ (Başköy)։ Գտնվում է Հոդուլդաղ (1938 մ) լեռան հյուսիս-արևելյան լանջին, ծովի մակերևույթից մոտավորապես 1700 մ բարձրության վրա։ Բնակավայրի մոտ սկիզբ է առնում Ալիս գետի ձախակողմյան վտակներից մեկը, որն անցնում է Բաշքյոյի միջով ու Յուրգյուբի մոտով և Ալիս գետին է խառնվում Ավանոսից (այժմ՝ Գյուլշեհիր) արևելք։ Պիզուն գտնվում է Արդեոսի դաշտում՝ Ալիս գետի ջրավազանը, Լիկաոնիան և Գաղատիան իրար միացնող ճանապարհների հանգուցային մի վայրում։ Պիզուից Կիլիկյան դռները տանող մի ճանապարհ անցնում է Կիզիստռայով (այժմ՝ Եշիլհիսար) և Կենդրոսկավիով (այժմ՝ Զենգիբարկալե)։ Այս վերջին հանգամանքը կապվում է Պիզուի դիրքը որոշելուն նպաստող այն տեղեկության հետ, որը առնչվում է 1079 թ. Կենդրոսկավի բերդում Գագիկ II թագավորի սպանվելուն։ Հայտնի է, որ 1079 թ. Գագիկ II-ը 1000 զինվորներով գնացել էր Տարսոն՝ Կիլիկիայի բյուզանդական կուսակալ Ապըլղարիպ Արծրունուն տեսության, Գագիկ II-ի որդի Դավիթը Ապըլղարիպ Արծրունու փեսան էր։ Այդ մասին Վարդան Բարձրբերդցին գրել է. «...զորդին իւր կրտսեր տայ 'ի փե-

սայութիւն Ապլխարիպ որդւոյ Խաչկայ՝ իշխանին Վասպուրականի, որ ընդ ձեռամբ ունէր զՍիս, զԱտանայ, զՊապաոսն և զԼամբրոն, զոր ստեաց և եդ 'ի բանտի։ Եւ լուեալ հօրն գնաց հանել զնա, և 'ի դառնալն՝ յիշեանս խեղդեցին զնա Հոռոմք։ Եւ պիղծն Ապլխարիպ սպան դեղով զփեսայն»[12]։

Գագիկ II-ի սպանության դեպքը խոր արձագանքներ է թողել։ Միջնադարի բազմաթիվ հայ ժամանակագիրներ անդրադարձել են դրան։ Նրանց տված իրար լրացնող տեղեկությունները լուսաբանում են սպանության դեպքի հետ առնչվող մանրամասնությունները։ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «... և դարձաւ Գագիկ որպէս առիւծ մռնչելով, վասնզի էր մեծ և հզօր և այր քաջ և կալեալ զամենայն իշխանս գաւառին՝ վարէր զնոսա երկաթի կապանօք առաջի իւր. և եկեալ հազար արամբ 'ի դաշտն Առժախասայ 'ի բերդն՝ որ ասի Կիզիստրայ...»[13]։ «Եւ յայնժամ աստուածասպան ազգն Հոռոմոց լարով աղեղան խնդգեցին զթագաւորն Հայոց և կախեցին զնա ընդ պարիսպն...»[14]։

Սմբատ սպարապետը, հավաքելով իր ժամանակի բանավոր և գրավոր տեղեկությունները, կազմել է բոլորից հարուստ և ընդարձակ հետևյալ վկայությունը. «'Ի թուին ՇԻԸ. (1079)... գնաց Գագիկ արքան բազում զօրոք 'ի մայրաքաղաքն Տարսոն առ Ասլղարիպ իշխանն Հայոց, յաղագս խնամութեան ինչ բանի՝ կոչմամբ Ապլղարիպն. և յաղագս պատճառի ինչ իրիք ոչ եղեւ գործ խնամութեան։ Եւ դարձաւ Գագիկ լի բարկութեամբ, մռնչելով, և եկեալ դաշտն Առճիասու և ընդ նմա ռ (1000) հեծեալ, մերձ 'ի բերդն որ կոչի Կիտոսկապի։ Եւ էին տէրք բերդին Յոյնք գ (3) եղբարք որդիք Մանտալէի։ Եւ Գագկայ թողեալ զզօրս իւր խոտորեցաւ 'ի ճանապարհէն գ արամբք և ելանէր առ նոսա 'ի տեսս. իսկ նոքա յառաջագոյն նենգութեամբ դարանամուտ եղեալ Գագկայ ծ (50) ձիաւորով, և յորժամ մերձ եղեւ 'ի բերդն Գագիկ, գային գ եղբարքն Յոյնք յերկրպագութիւն նմա. և Գագիկ խոնարհեալ առ նոսա 'ի համբոյր, և նոքա կալան զպարանոցն նորա և քարշեցին 'ի վայր յերիվարէն, և ելեալ դարանքն և առին զԳագիկ և ածին 'ի բերդն Կիտոսկապի, և յորժամ լուան զօրքն նորա՝ ցրուեցան և յետ ը (8) աւուր ժողովեցան 'ի վերայ բերդին ամենայն տունն Հայոց, Գագիկ որդի Աբասայ և ամենայն ցեղն Սինաքերիմայ, Ատոմ և Ապուսահլ և ամենայն իշխանքն Հայոց, և զաւուրս բազումս նեղեցին զբերդն և ոչ կարացին ինչ առնել. և իշխանքն որք կալան զԳագիկ՝ ոչ համարձակեցան թողուլ. զոր և ...։ Յայնժամ աստուածուրացքն խեղդեալ զթագաւորն Գագիկ և կախեցին զնա ընդ պարիսպն զօր մի, և ապա հանեալ արտաքոյ բերդին թաղեցին. զոր յետ զ (6) ամսոյ եկեալ այր մի 'ի քաղաքէ Նորա Բանիկ անուն, դողացեալ զմարմինն Գագկայ տարաւ իւր և յազգն, և արարին 'ի վերայ նորա կոծ մեծ ազգն Հայոց և թաղեցին զնա 'ի վանս իւր Պիկու»[15]։

Սմբատ սպարապետը ճշգրտորեն տեղադրել է այն բերդը, ուր սպանվել է Գագիկ II-ը. «... յորդւոցն Մանտալէի յդ եղբարցն։ Սոքա ունէին ամուր բերդ մի մօտ 'ի Զկնջուրն, վերահայեաց յաշխարհին Գամրաց, որ էր անուն բերդին Կենգոսկաւի»[16]։

---

12 «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 141։

13 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 219։

14 Նույն տեղում, էջ 220։

15 Սմբատ սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 86—87։

16 Նույն տեղում, էջ 136։


ՊԻԶՈՒ և ԾՐԶԱԿԱՅՔԸ
(XI - XIII դ.)
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԸՆԱԾՆԵՐ
Գ-գիկ Բ-ի Ճանապարհը
Ալ-ի-նդրեն III-ի Ճանապարհը
Բարեկամ Հեղինակ Ս.Հ. ՀԱՅԿԱԶՅԱՆ
Salonda
Genezin
1564
Tuzköy
Zoropassos
Arapsun
Kizil
Avados
Karahüyük
Erkilet
Kayseri
1043.
Üçkuyu
Nevşehir
Damsa
Sinasos
Acigöl
Alayhan
Hoca Meşüd han
Mamassos
K. Archelais
Aksaray
Nenizi
Derinkuyu
Suvermez
Selimekale
Narköy
Genedela
Gelveri
2144.
Sivrihisar
Hasan köy
Taşpinar
1425.
Misli
Hasandağ
3253.
1721
Çukurkent
2935.
Melendiz d.
Misli han
Andaval
Yeşilburç
Ortaköy
1335.
Ferteк
Nigde
Bor
Sövişköy
Başköy
Erciaz d.
3916.
Gedeme
Kurbağa gölü
Yeşilhisar
Zengibar kale
Dikilyas
2140
Bostanlık
3170.
2349.
Farat
Nirze
Gesi
Zincidere
Tomarza
Pusatlı
Develi köy
Çürükkale
1912.
Fraktin
Kıdkıdı
2671.
2471.
Gürünze
1789.
Su Samanti

Գագիկ II-ի և Ապլղարիպ Արծրունու՝ Տարսոնում կայացած հանդիպման բնույթը շատ հեռու էր խնամիական լինելուց։ Գագիկ II-ը նպատակ ուներ բյուզանդական տարածքում ստեղծել հայկական պետականություն, քանի որ դա վերացել էր բուն Հայաստանում՝ բյուզանդական դիվանագիտական մեքենայությունների, սելջուկ-թուրքերի ռազմական հաջող գործողությունների և հայ իշխանավորների վարած կենտրոնախույս քաղաքականության պատճառով։

Ապլղարիպ Արծրունին հավատարիմ էր մնում կայսեր։ Իսկ Գագիկ II-ը կորցրել էր թագավորությունը։ Նա իր որդի Դավթին ամուսնացրել էր Կիլիկիայի բյուզանդական կուսակալ Ապլղարիպ Արծրունու դստեր հետ, հույս ունենալով, որ կարելի կլինի ժառանգական կապերի շնորհիվ Կիլիկիայում ստեղծել հայկական իշխանություն, նախ՝ Բյուզանդիայից կախյալ, ապա՝ անկախ։ 1071—1080 թթ. Փոքր Ասիայում տիրող խառն իրադրության պատճառով Բյուզանդիայի դրությունը վատացել էր։ Դա հուսադրում էր հայ իշխաններից շատերին։ Սելջուկ-թուրքերը արագությամբ շարժվում էին դեպի արևմուտք՝ գրավելով Բյուզանդական կայսրության երկրամասերը։ Հայաստանից գաղթած և Փոքր Ասիայում բնակություն հաստատած հայ թագավորների և իշխանների տիրույթները վտանգի տակ էին։ Նրանք՝ կարծելով, որ քրիստոնյա իշխանության տակ ապահով կլինեն, ժամանակին իրենց հայրենական տիրույթները զիջել էին բյուզանդացիներին։ Սակայն դեպքերի ընթացքը շարդարացրեց հայ իշխանավորների հույսերը։ Գագիկ II-ը և նրա բախտակիցները շտապում էին օգտվել առիթից։ Ապլղարիպ Արծրունին, գնահատելով սելջուկ-թուրքերի ռազմական կարողությունը և առավելությունը, բյուզանդական իր տիրույթներում համալրումներ էր կատարում՝ Կիլիկիայում հայ իշխանական ընտանիքներ բնակեցնելով։ Դրանց թվում կարելի է նշել Լամբրոնի Օշինյան, Բազե բերդի տեր Բազունի, Նաթանայելյան, Բարձրբերդի, Պռականու և մյուս իշխանական տների անունները։ Սելջուկ-թուրքերի առաջխաղացման պատճառով ոտքի տակ էր գնալու նաև Գագիկ II-ի տիրույթը՝ Պիզուից և Կալոն Պաղատից բաղկացած փոքր գավառը։ Հետագայում հնարավոր էր, որ սելջուկ-թուրքերը անցնեին Տավրոս լեռների պատվարը և թափանցեին Կիլիկիա։

Ապլղարիպ Արծրունին հենվում էր Բյուզանդիայի վրա և համարվում էր վստահելի իշխան։ Նա ուներ մեծ տիրույթ։ Իսկ Գագիկ II-ի ունեցածը միայն կորած թագավորական մի տիտղոս, մի կտոր հողամաս և փոքրաթիվ զորք էր։ Բացի այդ, կայսեր համար Գագիկ II-ը անցանկալի անձնավորություն էր։

Ապլղարիպ Արծրունին չէր ուզում խաղի մեջ դնել իր կարողությունը, նա մեկ անգամ արդեն զրկվել էր Վասպուրականի Թորնավան տիրույթից, երբ թուրքերը հարձակվել էին և գրավել այն։ Երկյուղելով իշխանությունը կրկին կորցնելու վտանգից, Ապլղարիպը կտրուկ կերպով հակառակվել էր Գագիկ II-ի ծրագրին։ Ապահովության համար նա բանտարկել էր իր փեսային՝ Գագիկ II-ի որդի Դավթին։ Պատմագիրների տեղեկություններից պարզվում է, որ Տարսոնում կայացած հանդիպումը այնքան էլ խնամիական ավարտ չի ունեցել։ Այդ պատճառով Գագիկ II-ը իր հետ տարած 1000 զինվորների օգնությամբ կալանավորում է Ապլղարիպ Արծրունու տիրույթներում գտնվող իշխաններին և «երկաթի կապանքի» քշում-տանում Պիզու կամ Կալոն Պաղատ՝ իբրև պատանդ իր որդու՝ Դավթի փոխարեն։ Ապլղարիպ Արծրու-

նին լուր է ուղարկում Տարսոնից Պիղու կամ Կալոն Պաղատ տանող ճանապարհի վրա գտնվող բյուզանդական բերդերի իշխաններին, որպեսզի բռնեն Գագիկ II-ին։ Դա Կենդրոսկավի բերդի մոտ հաջողվում է Գագիկ II-ի հարևան Մանտալյան իշխաններին։ Հանդամանքների բարդացման պատճառով Գագիկ II-ը սպանվում է աղեղի լարով և կախվում բերդից, նրա կալանավորած իշխանները ազատվում են։ Գագիկ II-ի դիակը, մեկ օր կախված մնալուց հետո, թաղում են բերդից դուրս։ Վեց ամիս անց պիղուեցի մի մարդ, Բանիկ անունով, դիշերով հանում է Գագիկ II-ի դիակը և տանում թաղում Պիղուի գագկաշեն Ս. Խաչ վանքում։ Իսկ Ապլղարիպ Արծրունին թունավորում է իր սեփական Պապեռոն բերդում բանտարկված Դավթին։

Գագիկ II-ը Կիլիկիայում կալանավորած իշխաններին բանտարկելու կարող էր տանել միմիայն իր տիրույթում գտնվող մի ամրոց՝ Պիղու կամ Կալոն Պաղատ և ոչ թե մի այլ, թեկուզ հայ, իշխանավորի տիրույթում գտնվող վայր։ Կենդրոսկավի բերդը, ուր սպանվել է Գագիկ II-ը, մեզ ծանոթ է այժմ Զենգիբարկալե անունով։ Պատմագիրներից Մատթեոս Ուռհայեցու կարծիքով Գագիկ II-ի սպանությունը կատարվել է Կիզիստռա[17] բերդում։ Սակայն դա ճիշտ չէ։ Կիզիստռան գտնվում էր Կենդրոսկավիից մի քանի կիլոմետր հյուսիս, այն այժմ կոչվում է Եշիլհիսար։ 1079 թ. Կիզիստռան ևս պատկանում էր Մանտալյան իշխաններին և հենց այդ հանգամանքն էլ շփոթություն է առաջացրել։

Գագիկ II-ի երթը եղել է Տարսոն (այժմ՝ Թարսուս), Պողանտը, Կեմերհիսար, Նիյդե, Միսլիհան, Զենգիբարկալե, Եշիլհիսար ճանապարհով։ Կիզիստռայում Գագիկ II-ի դնացած ճանապարհը բաժանվում էր երկուսի։ Դեպի արևելք թեքվողը տանում էր Խավատանք և ապա՝ Կեսարիա քաղաքները։ Իսկ դեպի հյուսիս ուղղված մյուս ճանապարհը հասնում էր արդի Ինճեսու բնակավայրը և այնտեղից բաժանվում տարբեր ուղղություններին։ Ինչպես հայտնի է, 1079 թ. Խավատանքը դեռևս պատկանում էր նախկինում Կարսի թագավոր Գագիկ Աբասյանին[18]։ Այդ իսկ պատճառով Գագիկ II-ը «երկաթի կապանօք» կալանավորված իշխաններին բանտարկելու համար չէր կարող ընթանալ Կիզիստռայից դեպի արևելք՝ Խավատանք տանող ճանապարհով։ Հետևաբար՝ Գագիկ II-ի տիրույթները գտնվում էին Կենդրոսկավիից և Կիզիստռայից դեպի հյուսիս, Արգեոս լեռից ու Կեսարիա քաղաքից արևմուտք, «դաշտն Առճիասու» շրջանում։

Մենք կարծում ենք, որ Գագիկ II-ին տրված միջնադարյան Կալոն Պաղատ քաղաքը արդի Ինճեսուն է։ Հունարեն Կալոն Պաղատ (Καλὸν Πηγάδι) նշանակում է «գեղեցիկ ակ, աղվոր ջուրի հոր, անուշ ջրի աղբյուր»։ Թուր-

---

17 Մ. Ուռհայեցի, էջ 219։

18 Մանազկերտի հաղթանակից հետո, 1072 թ. Կեսարիան և Ծամնդավը մտել էին Դաշիշանդյան իշխանության (1067—1175 թթ.) սահմանների մեջ։ Դրա պատճառով կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերը (1066—1105 թթ.) ստիպված եղավ կաթողիկոսական աթոռը Ծամնդավից փոխադրել Մուտառասունի վանքը։ Ինն տարի (1072—1081 թթ.) այդտեղ էր գտնվում հայոց կաթողիկոսի պաշտոնական նստավայրը։ Ուստի՝ Գագիկ Աբասյանի Կեսարիայի և Ծամնդավի տիրույթները 1079 թ. առաջ գրավված էին թուրքերի կողմից։ 1079 թ. Կապադովկիայում, բյուզանդական կղզիացած հատուկենտ բերդատեր իշխաններ դեռ պայքարում էին սելջուկյան և դանիշմանդյան զորքերի ճնշման դեմ։ Դրանց թվում էին նաև Մանտալյան իշխանները, Գագիկ II-ը, Գագիկ Աբասյանը, Ռուբեն իշխանը և մյուսները։

քերեն ինճեսու (incesu) նշանակում է «բարակ ջուր կամ վտակ, նուրբ կամ անուշ ջուր, աղվոր ջուր», մի իմաստ, որը տալիս է նաև հունարենը։ Ըստ երևույթին, Ինճեսուն թարգմանությունն է Կալոն Պաղատի։ Ինճեսուն գտնվում է տարանցիկ ճանապարհների հանգույցում, այնտեղով են անցնում Կեսարիայից դեպի արևմուտք՝ Լիկաոնիա և հարավ՝ Կիլիկիա տանող տարանցիկ ճանապարհները։ Ինճեսուն բանուկ երթևեկություն է ունեցել նաև անցյալում, այնտեղ եղել է բերդ։ Այդ իսկ պատճառով մենք կարծում ենք, որ Գագիկ II-ի նստավայր Կալոն Պաղատը գտնվում էր Ինճեսուում։ Սելջուկ սուլթանների կառուցել տված Արքունի ճանապարհը ևս անցնում էր Ինճեսուով։ Այսօր իսկ այդ քաղաքը վերոհիշյալ ճանապարհների խաչմերուկում կարևոր հանգրվան է և ունի շուրջ 6500 թուրք բնակիչ։

Յուրգյուբից արդի Բաշքյոյի (սելջ. Բիզ, Պիզու) վրայով Դեվելի տանող վերոհիշյալ ճանապարհը մեջտեղում հատում է Եշիլհիսարից Ինճեսու տանող ուղին։

Գագիկ II Բագրատունու Կապադովկիայի տիրույթը գրավում էր Էրճիասդաղ և Հոդուլդաղ լեռների և Կուրբաղագյոլյու լճի ու դրանից հյուսիս գտնվող ճահճի միջև ընկած «դաշտն Առճիասու»[19] կոչվող հովիտը, այժմյան Ինճեսու գյուղաքաղաքով ու Բաշքյոյ գյուղով, ուր նա թաղված է։

Բյուզանդիայի Լևոն V կայսեր 816 թ. վերանորոգել տված Կամառախ[20] բնակավայրը ևս Պիզուի և Արկագիուպոլիսի պես պիտի գտնվեր Կեսարիայի Արգեոս լեռան շրջակայքում։ Արգեոս լեռան հարավային ստորոտում մեր բարտեզում նշված է XIX դարի հայկական «Կամարայ եկեղեցին»։ Ահա այդտեղ պետք է լինի IX դարի Կամառախ բնակավայրը։ Թեև Կամառախի անունը հիշեցնում է Կեսարիայի հյուսիս-արևելյան կողմում, դեպի Սեբաստիա տանող ճանապարհի վրայի Կեմերեկ շրջանի անունը, սակայն դա հայերեն Գամիրք տեղանվան աղավաղված ձևն է։

Արգեոս լեռը հրաբխային բնույթ ունի և լրիվ չի հանգած։ Վերոհիշյալ վայրերը քանիցս ավերվել են Արգեոս լեռան գործունեության հետևանքով[21]։ Մի քանի տվյալներ այդ մասին։

17 թ. — Կրակ ժայթքեց Արգեոս լեռը, Կեսարիան և Փոքր Ասիայի 14 մեծագույն քաղաքներ կործանվեցին։ Կապադովկիան, Կիլիկիան և Արևմտյան Փոքր Ասիան մեծապես վնասվեցին։

138—161 թթ. միջև կործանարար երկրաշարժներ Կապադովկիայում։

233—269 թթ. միջև մեծ երկրաշարժ Կապադովկիայում։

453 թ. — Մեծ երկրաշարժ Կապադովկիայում[22]։

23/9 1063 թ.— Կործանարար մեծ երկրաշարժ Կապադովկիայում[23]։

1205 և 1835 թթ.—Երկրաշարժեր Կեսարիայում։

1940 թ. — Երկրաշարժ Բոր, Կեսարիա և Դեվելի քաղաքներում[24]։

Երկրի կեղևի ճեղքվածքներից մեկը անցնում է Արգեոս լեռան վրայով,

---

19 Ամրատ Սպարապետ, էջ 86։ Մ. Ուռհայեցի, էջ 219։

20 Ասողիկ, էջ 143։

21 Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 9—17։

22 Նույն տեղում, էջ 300։

23 Նույն տեղում, էջ 464։

24 Տե՛ս Nuriye Pinar, Ervin Lahn, Türkiye depremleri izahli katalogu, Ankara 1952.

իսկ երկրորդը՝ Ինճեսուով և երկուսը իրար զուգահեռ իջնում են դեպի հարավ։ Դեվելին երկրաշարժերից մասամբ ավերված քաղաք է։ Ինճեսուն, Հաճրլարը ցնցումներ կրած բնակավայրեր են։ Էվերեկը, որը հայերի Ավերակն էր, նույնպես անցյալում երկրաշարժերից ավերված բնակավայր է եղել։ Մի խոսքով, Գագիկ II-ի տիրույթը ամբողջությամբ գտնվում էր երկրագնդի կեղևի ճեղքվածքի գծի վրա և հրաբխային Արգեոս լեռան անմիջական մերձավորությամբ[25]։

Գագիկ II-ի տիրույթի դիրքը որոշվելուց հետո պարզվում է, որ Կիլիկիայի Ռուբինյան իշխանության հիմնադիր Ռուբենի Կոսիտառա բերդը (այժմ՝ Զյուրյուկ կալե) գտնվում էր Գագիկ Աբասյանին պատկանող խավատանեքին սահմանակից, նրանից արևելք ընկած Պիզուից և Կալոն Պաղատից 65—70 կմ հեռու մի վայրում։ Գագիկ II-ի և Ռուբենի տիրույթների միջև Գագիկ Աբասյանի տիրույթն էր։ Սրանով էլ կասկածի տակ է ընկնում Գագիկ II-ի և Ռուբենի ազգակցական կապի կամ մերձավորության հարցը։ Անհրաժեշտ է վերաքննել Ռուբենի՝ դեռ Կոսիտառա բերդի տեր եղած ժամանակաշրջանի վասալական կախման հանգամանքները։

Գագիկ II-ի սպանվելուց և Պիզուի Ս. Խաչ վանքում թաղվելուց հետո էլ այնտեղ հայ բնակչություն է եղել։ Բավական ժամանակ վանքը շարունակել է պահպանել իր գոյությունը։ Բյուզանդիայի Ալեքս կայսերը (1080—1118 թթ.) նկատի ունենալով Վարդան Բարձրբերդցին գրում է. «Յորում աւուր եղեւ նշան ինչ սոսկալի 'ի վանքն Պիզոյ զոր շինեաց Գագիկ արքայ»[26]։ Հիշյալ «սոսկալի նշանը» այն էր, որ եկեղեցու սրբություններից մեկը ընկել էր գետին ու կանթեղի լույսը չէր մարել։

Եվրոպացի պատմագիրները նշել են, թե առաջին խաչակիրների արշավանքի ժամանակ (1096 թ.) Խավատանեքը (Gabadonia) եղել է հայաշատ (terre des Arméniens) երկրամաս[27]։ Դրանից հետո էլ դարեր շարունակ Փոքր Հայքը հայաբնակ է եղել։

Սրանից ճիշտ 900 տարի առաջ իր մայրամուտին էր հասել Հայաստանի Բագրատունիների հարստությունը։ Մեկ տարի անց Լեռնային Կիլիկիայում, Տավրոս լեռների Կոռոմոզոլո գյուղում, Ռուբեն I-ը դառնալու էր Կիլիկիայի հայկական պետության և Ռուբինյանների իշխանական տան հիմնադիրը։

ГОРОД ПИЗУ ГАГИКА II БАГРАТУНИ

М. Г. ДЖЕВАНРДЖЯН

(Резюме)

В статье уточняется местоположение средневекового каппадокийского города Пизу, принадлежавшего Гагику II, последнему царю из династии армянских Багратидов, и местоположение монастыря Сурб Хач в Пизу, где был похоронен царь Гагик.

25 Կեսարիայի երկրաշարժերի մասին տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո, Ա, էջ 713։

26 Վարդան Բարձրբերդցի, էջ 140։

27 „Histoire anonyme de la première croisade", trad. franç. de L. Bréhier, Paris, 1924, էջ 60—61։ Nicole et Michel Thierry, Nouvelles églises rupestres de Cappadoce, Region du Hasan dagl, Paris, 1963, էջ 129։